ական զգալի դեր խաղացող մի դասակարգի պահանջները, որպէսզի թէ ժողովուրդը և թէ մամուլը՝ մեր հասարակական երևոյթները քննելիս և կարգադրելիս՝ կարողանան գիտակցօրէն հաշուի առնել և այդ ոյժը, ինկատի ունենալ և նրա ձայնը։ Շերտաւորումը աւելի է պարզում կացութիւնը և անելիքը...

—

Հասկեր, 1906 թ., յունուար.— խնամքով կազմուած այս համարում էլ գլխաւորապէս ի նկատի են առնուած գաղրոցական հասակի մանուկները։ Ցանկալի էր որ չմոռացուէին մանկապարտիզական հասակի երեխաներն ևս։ Իբրև մանկավարժական յաւելուած կցուած է Հենրիկ Վերնից՝ «Երեխաների կրթութիւնը մինչև 6 տարեկան հասակը» գրքոյկի թարգմանութիւնը։ Ցիշեցնում ենք մեր ընթերցողներին որ մանկական պատկերազարդ այդ ամսագրի բաժանորդագինն է տարեկան, մանկավարժական բաժնով, 4 ր., արտասահմանում 12 ֆրանկ։

—

Բազմավէպ, փետրուար.—«Հայերը բիւզանդական գրականութեան մէջ» Ցատոյնի է թէ ինչ մեծ դեր են խաղացել հայերը Բիւզանդիայում. հայազգի թագաւորների և զօրավարների, Պրոյերեսիոս ճարտարախօսի մասին շատերն են լսել։ Հ. Սահակեան տալիս է ցարդ անծանօթ մի շարք անուններ, որոնք անպայման հայկական են, թէև Բիւզանդիական գրականութեան մէջ միայն յիշատակուած։ Թոնիկ, Վարդան, Ճնճղուկ, Արտաւազդ, Խաչիկ և այլն։ Այս համարում խօսումէ Արտաւազդ աստղաբաշխի մասին, որ ապրում էր XIII-րդ դարում— «Աղգագրական տեղեկութիւնք հայոց վերայ օտար պատմչաց քով» գրուածքն շահագրգիռ է մեր անցեալով հետաքրքրուողների համար. հայկական բանուածքների, ժողովրդական և նախարարական տարազների, հերարդման մասին օտար պատմիչների հատուկտոր խօսքերը լոյս են սփռում շատ մութ խնդիրների վերայ։ «Բազմավէպի» այս տարուայ համարներում, ի միջի այլոց, տպուում է Հենրիկոս Սենկեվիչի «Սրով ու հրով» պատմական վէպի թարգմանութիւնը և Տասսոյի «Երուսաղէմի առումը»։

—

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

—

Մեր նոր բաժանորդներից նրանք, որոնք կը ցանկանան ձեռք բերել «Հայկի Բարա» վէպի այն մասը, որ տպուել է 1905 թ. ընթացքում—պէտք է ուղարկեն ճանապարհածախք 50 կոպ. (կարելի է նամակադրօշմով)։ «Հայկի Բարայի» Ա. մասը, որ լոյս է տեսել 1904 թուին և արժէ 2 ռուբլի, մեր բաժանորդների համար արժէ 1 ր., ճանապարհածախքով 1 ր. 50 կ.։

Նոր բաժանորդներից նրանք, որոնք թիւրիմացութեամբ ստացած չեն լինի 1905 թ. նոյեմբեր-դեկտեմբերի համարը (ձրիաբար)—թող հաճեն բաց նամակով իմաց տալ մեզ այդ մասին։

Բանուորների խնդիրքով «Մուրճ»-ի բաժանորդագինը բանուորների համար ևս լինելու է 8 ռուբլի։ Բանուորները «Մուրճ»-ի տարեկան բաժանորդագինը կարող են վճարել ամսէ-ամիս, իւրաքանչիւր անգամ 1 ռուբլի (ութ ամիսների ընթացքում)։ Փոխադրական ծախքերից ազատուելու համար Բազմի և շրջակայքի բանուորները կարող են բաժանորդագինը վճարել պ. Դանիել Տէր-Դանիէլեանին («Մանթաշեան և ընկ.» գրասենեակ)։

Առանձարի «Վշտի ծիծաղ» գիրքը «Մուրճի» բաժանորդների համար արժէ 70 կոպ. (1 ռուբլու փոխարէն)։

Խմբագիր՝ Լ. Սարգսեան
Հրատարակիչներ Վ. Գանանեան
Լ. Սարգսեան։

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԲԱՑՈՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

„ԿԵԱՆՔ“

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՕՐԱԹԵՐԹԻ, ՈՐ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՑՄԱՆՆԵՐԻ ՇՆՈՐՀԻՒ ԱՌԱՑԺՄ ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԻԲՐԵՒ

ՃԱԲԱԹԱԹԵՐԹ

Բաժանորդագինն է՝ Թիֆլիսում տարեկան 2 ր. 50 կ., դուրսը տարեկան 3 ր., արտասահման տարեկան 4 ր.։ Ամսական Թիֆլիսում 20 կոպ., դուրսը 30 կ., արտասահման 40 կ.։ Հատով Թիֆլիսում 5 կ., դուրսը 7 կ.։

Հասցէն՝ Тифлисъ Редакція «Кянкъ», Чавчавадзская № 4. արտասահմանից՝ Tiflis, Rédaction «Kiank». Tschewtschaswadskaia № 4.

Խմբագիր-հրատարակիչ՝ Բ. Իշխանեան